



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՓԵՏՐՎԱՐԻ 2019 թվականի N 10

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ 675.0 ՔՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ 100.44 ՔՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Արմեն Մարտիրոսի Ավինյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի հին այգետարածք 15-րդ թաղամաս թիվ 21 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (կող 07-054-0219-0029) 1997 թվականին ինքնակամ կառուցված բնակելի տունը, ծածկը, աստիճանահարթակը, լողավազանը, շվաքարանը, օժանդակ շինությունը, պարիսպը, հենապատը և սեփականության իրավունքով իրեն պատկանող 675.0 քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին կից ինքնակամ զբաղեցրած 100.44 քմ հողամասի նկատմամբ ճանաչել սեփականության իրավունքը: Համայնքի կադաստրային քարտեզի, որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերի, տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Արմեն Մարտիրոսի Ավինյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի հին այգետարածք 15-րդ թաղամաս թիվ 21 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում 1997 թվականին ինքնակամ կառուցվել է 280.9 քմ մակերեսով բնակելի տուն, 16.6 քմ մակերեսով ծածկ, 7.3 քմ մակերեսով աստիճանահարթակ, 28.8 քմ մակերեսով լողավազան, 8.7 քմ մակերեսով շվաքարան, 10.5 քմ մակերեսով օժանդակ շինություն, 15.1 քմ մակերեսով պարիսպ, 5.1 քմ մակերեսով հենապատ և սեփականության իրավունքով իրենց պատկանող 675.0 քմ հողամասին կից ինքնակամ զբաղեցվել է 100.44 քմ մակերեսով հողամաս:

Համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ

հաստատված կարգի 9; 10; 11; 22.1 կետերի պահանջների, հիմք ընդունելով որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արմեն Մարտիրոսի Ավինյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի հին այգետարածք 15-րդ թաղամաս թիվ 21 հասցեի բնակավայրերի նշանակության հողամասում շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, 100.44 քմ տարածքը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում՝ **որոշում եմ**.

1. Քաղաքացի Արմեն Մարտիրոսի Ավինյանին սեփականության իրավունքով պատկանող 280.9 քմ մակերեսով բնակելի տունը, 16.6 քմ մակերեսով ծածկը, 7.3 քմ մակերեսով աստիճանահարթակը, 28.8 քմ մակերեսով լողավազանը, 8.7 քմ մակերեսով շվաքարանը, 10.5 քմ մակերեսով օժանդակ շինությունը, 15.1 քմ մակերեսով պարիսպը և 5.1 քմ մակերեսով հենապատը համարել օրինական:

2. Հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար վճար չի գանձվում:

3. Քաղաքացի Արմեն Մարտիրոսի Ավինյանին սեփականության իրավունքով պատկանող 675.0 քմ հողամասին կից ավել օգտագործվող 100.44 քմ, մակերեսով ինքնակամ զբաղեցրած հողամասի նկատմամբ՝ համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների, ճանաչել նրանց սեփականության իրավունքը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

18-Feb-19

X 

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱՔՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2019 թվականի N 16

ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԻՐԱՑՄԱՆ ԵՎ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերի պահանջների, հիմք ընդունելով «ՄԱՐԻԱՄ ՄՈՎՍԵՍՅԱՆ ՌԱՖԻԿԻ» ԱԶ-ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ.**

1. «ՄԱՐԻԱՄ ՄՈՎՍԵՍՅԱՆ ՌԱՖԻԿԻ» ԱԶ-ին տալ 1-ին փողոց թիվ 8 հասցեում գտնվող հասարակական սննդի կետում հանրային սննդի կազմակերպման, իրացման և վաճառքի թույլտվություն 2019 թվականի 1-ին եռամսյակի համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

28-Feb-19

X 

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2019 թ. փետրվարի 28
գ. Պտղնի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2019 թվականի N 15

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ 500.0 ՔՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ 25.0 ՔՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Լավրենտ Սերյոժայի Ղազարյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-1 այգեզանգված 15-րդ թաղամաս թիվ 8 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (կող. 07-054-0135-0034) 1997 թվականին ինքնակամ կառուցված պարիսպ, 2009 թվականին ինքնակամ կառուցված շինությունները (զուգարան, ծածկ) և սեփականության իրավունքով իրեն պատկանող 500.0 քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին կից ինքնակամ զբաղեցրած 25.0 քմ հողամասի նկատմամբ ճանաչել սեփականության իրավունքը: Համայնքի կադաստրային քարտեզի, որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերի, տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Լավրենտ Սերյոժայի Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-1 այգեզանգված 15-րդ թաղամաս թիվ 8 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում 1997 թվականին ինքնակամ կառուցվել է 15.0 քմ մակերեսով պարիսպ, 2009 թվականին ինքնակամ կառուցվել է 21.2 քմ մակերեսով շինություններ (զուգարան, ծածկ) և սեփականության իրավունքով իրեն պատկանող 500.0 քմ հողամասին կից ինքնակամ զբաղեցվել է 25.0 քմ մակերեսով հողամաս:

Համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9; 10; 11; 13; 22.1 կետերի պահանջների, հիմք ընդունելով որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Լավրենտ Սերյոժայի Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-1 այգեզանգված 15-րդ թաղամաս թիվ 8 հասցեի բնակավայրերի նշանակության հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, 25.0 քմ տարածքը ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում՝ **որոշում եմ.**

1. Քաղաքացի Լավրենտ Սերյոժայի Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող 1997 թվականին

կառուցված 15.0 քմ մակերեսով պարիսպը համարել օրինական:

2. Հաշվի առնելով, որ պարիսպը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, ինքնակամ կառուցված պարիսպի օրինականացման համար վճար չի գանձվում:

3. Քաղաքացի Լավրենտ Սերյոժայի Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող 2009 թվականին կառուցված 21.2 քմ մակերեսով շինությունները (զուգարան, ծածկ) համարել օրինական:

4. Պարտավորեցնել քաղաքացի Լավրենտ Սերյոժայի Ղազարյանին 2009 թվականին կառուցված 21.2 քմ մակերեսով շինությունների (զուգարան, ծածկ) համար համայնքային բյուջե 900105225214 հաշվեհամարին վճարել 33080 (երեսուն երեք հազար ութսուն) ՀՀ դրամ:

5. Քաղաքացի Լավրենտ Սերյոժայի Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող 500.0 քմ հողամասին կից ավել օգտագործվող 25.0 քմ մակերեսով ինքնակամ զբաղեցրած հողամասի նկատմամբ՝ համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների, ճանաչել նրա սեփականության իրավունքը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

28-Feb-19

X 

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2019 թ. փետրվարի 28
գ. Պտղնի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2019 թվականի N 14

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ 500.0 ՔՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ 5.8 ՔՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Մարիամ Գրիշայի Պողոսյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-1 այգեզանգված 15-րդ թաղամաս թիվ 9 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (կոդ 07-054-0135-0035) 1993-1997 թվականներին ինքնական կառուցված այգետնակը (նկուղ), աստիճանը և պարիսպը, 2008 թվականին ինքնական կառուցված այգետնակը (1-ին հարկ) և սեփականության իրավունքով իրեն պատկանող 500.0 քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին կից ինքնական զբաղեցրած 5.8 քմ հողամասի նկատմամբ ճանաչել սեփականության իրավունքը: Համայնքի կադաստրային քարտեզի, որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերի, տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Մարիամ Գրիշայի Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-1 այգեզանգված 15-րդ թաղամաս թիվ 9 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում 1993-1997 թվականներին ինքնական կառուցվել է 96.7 քմ մակերեսով այգետնակ (նկուղ), 4.8 քմ մակերեսով աստիճան, 8.5 քմ մակերեսով պարիսպ, 2008 թվականին ինքնական կառուցվել է 90.45 քմ մակերեսով այգետնակ (1-ին հարկ) և սեփականության իրավունքով իրեն պատկանող 500.0 քմ հողամասին կից ինքնական զբաղեցվել է 5.8 քմ մակերեսով հողամաս:

Համաձայն Հոդվածի օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնական կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9; 10; 11; 13; 22.1 կետերի պահանջների, հիմք ընդունելով որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մարիամ Գրիշայի Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-1 այգեզանգված 15-րդ թաղամաս թիվ 9 հասցեի բնակավայրերի նշանակության հողամասում ինքնական կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, 5.8 քմ տարածքը ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում՝ **որոշում եմ**:

1. Քաղաքացի Մարիամ Գրիշայի Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող 1993-1997 թվականներին կառուցված 96.7 քմ մակերեսով այգետնակը (նկուղ), 4.8 քմ մակերեսով աստիճանը և 8.5 քմ մակերեսով պարիսպը համարել օրինական:
2. Հաշվի առնելով, որ այգետնակը, աստիճանը և պարիսպը կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, ինքնական կառուցված շինությունների օրինականացման համար վճար չի գանձվում:
3. Քաղաքացի Մարիամ Գրիշայի Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող 2008 թվականին կառուցված 90.45 քմ մակերեսով այգետնակը (1-ին հարկ) համարել օրինական:
4. Պարտավորեցնել քաղաքացի Մարիամ Գրիշայի Պողոսյանին 2008 թվականին կառուցված 90.45 քմ մակերեսով այգետնակի (1-ին հարկ) համար համայնքային բյուջե 900105225214 հաշվեհամարին վճարել 235170 (երկու հարյուր երեսուն հինգ հազար մեկ հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ:
5. Քաղաքացի Մարիամ Գրիշայի Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող 500.0 քմ հողամասին կից ավել օգտագործվող 5.8 քմ մակերեսով ինքնական զբաղեցրած հողամասի նկատմամբ՝ համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների, ճանաչել նրա սեփականության իրավունքը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

28-Feb-19

X 

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2019 թ. փետրվարի 28
գ. Պողնի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՓԵՏՐՎԱՐԻ 2019 թվականի N 13

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ, 525.0 ՔՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ 57.0 ՔՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱԶՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի N 14 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Լյուդմիլա Վլադիմիրի Հակոբյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-2 այգետարածք 21-րդ թաղամաս թիվ 5 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (կող. 07-054-0120-0015) 1999 թվականին ինքնական կառուցված շինությունները, 2012 թվականին ինքնական կառուցված ծածկը, պարիսպը և սեփականության իրավունքով իրեն պատկանող 525.0 քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին կից ինքնական զբաղեցրած 57.0 քմ հողամասի նկատմամբ ճանաչել սեփականության իրավունքը: Համայնքի կադաստրային քարտեզի, որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերի, տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Լյուդմիլա Վլադիմիրի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-2 այգետարածք 21-րդ թաղամաս թիվ 5 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում 1999 թվականին ինքնական կառուցվել է 285.7 քմ մակերեսով այգետնակ, 10.08 քմ մակերեսով պարիսպ, 2012 թվականին ինքնական կառուցվել է 7.1 քմ մակերեսով ծածկ, 3.5 քմ մակերեսով պարիսպ և սեփականության իրավունքով իրեն պատկանող 525.0 քմ հողամասին կից ինքնական զբաղեցվել է 57.0 քմ մակերեսով հողամաս:

Համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի պահանջների, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնական կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9; 10; 11; 13; 22.1 կետերի պահանջների, հիմք ընդունելով որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Լյուդմիլա Վլադիմիրի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-2 այգետարածք 21-րդ թաղամաս թիվ 5 հասցեի բնակավայրերի նշանակության հողամասում ինքնական կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, 57.0 քմ տարածքը ընդգրկված չէ հողային

օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում **որոշում եմ**.

1. Քաղաքացի Լյուդմիլա Վլադիմիրի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող 1999 թվականին կառուցված 285.7 քմ մակերեսով այգետնակը և 10.08 քմ մակերեսով պարիսպը համարել օրինական:
2. Հաշվի առնելով, որ այգետնակն ու պարիսպը կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, ինքնական կառուցված շինությունների օրինականացման համար վճար չի գանձվում:
3. Քաղաքացի Լյուդմիլա Վլադիմիրի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող 2002 թվականին կառուցված 7.1 քմ մակերեսով ծածկը և 3.5 քմ մակերեսով պարիսպը համարել օրինական:
4. Պարտավորեցնել քաղաքացի Լյուդմիլա Վլադիմիրի Հակոբյանին 2012 թվականին կառուցված 7.1 ծածկի և 3.5 քմ մակերեսով պարիսպի համար համայնքային բյուջե 900105225214 հաշվեհամարին վճարել 16540 (տասն վեց հազար հինգ հարյուր քառասուն) ՀՀ դրամ:
5. Քաղաքացի Լյուդմիլա Վլադիմիրի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող 525.0 քմ հողամասին կից ավել օգտագործվող 57.0 քմ մակերեսով ինքնական զբաղեցրած հողամասի նկատմամբ՝ համաձայն Հոդվածի օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների, ճանաչել նրա սեփականության իրավունքը:
6. Ուժը կորցրած ճանաչել Պտղնի համայնքի ղեկավարի 2012 թվականի ապրիլի 13-ի «ԼՅՈՒԴՄԻԼԱ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՆՐԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ 57.0 ՔՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ» N 14 որոշումը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

22-Feb-19

X 

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2019 թ. փետրվարի 22
գ. Պտղնի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 12

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի
դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման պահանջների՝ **որոշում եմ**.

- Համայնքային սեփականություն հանդիսացող 0.01622 հա բնակավայրերի նշանակության
այլ հողին (ծածկագիր 07-054-0218-) տրամադրել հասցե՝
Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-1 այգետարածք 16-րդ թաղամաս թիվ 1/1:
- Համայնքային սեփականություն հանդիսացող 0.02509 հա բնակավայրերի նշանակության
այլ հողին (ծածկագիր 07-054-0218-) տրամադրել հասցե՝
Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-1 այգետարածք 16-րդ թաղամաս թիվ 1/2:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

21-Feb-19

X 

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՓԵՏՐՎԱՐԻ 2019 թվականի N 11

ՀՀ ԶՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՅԻ «ԶՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԾԻԳ» ՊԸ-ԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով ՀՀ Զրային կոմիտեյի «Զրային տնտեսության ԾԻԳ» ՊԸ-ի դիմումը և լիցենզավորված ճարտարապետի կողմից գծված նախագծի առկայությունը՝ **որոշում եմ.**

1. ՀՀ Զրային կոմիտեյի «Զրային տնտեսության ԾԻԳ» ՊԸ-ին տալ Կոտայքի մարզի Պտղնի համայնքի վարչական տարածքում «Պտղնի համայնքի ինքնահոս ոռոգման համակարգի կառուցում» աշխատանքների շինարարության թույլտվություն:
2. Հանձնարարել ՀՀ Զրային կոմիտեյի «Զրային տնտեսության ԾԻԳ» ՊԸ-ին շինարարական աշխատանքներն իրականացնել քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան:
3. Շինարարական աշխատանքները սկսել տեղական տուրքը վճարելուց հետո:
4. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ եռօրյա ժամկետում համայնքապետարան ներկայացնել տեղեկանք Ձև N 5-ը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

21-Feb-19

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ